

ւորաբար ռումէն ճարտարապետութեան մէջ խաղալով նշանակելի դեր մը:

Ներկայ գործը առաւելապէս հայ դադու-թին պատմութիւնն է: Ան պիտի պատմէ հետեւեալի, թէ ինչպէս հայերը տէր դարձած են քաղաքական իրաւունքներու այս երկրին մէջ, թէ ինչ եղած է անոնց թիւը դարերու ընթացքին, ինչպէս հալածուած է հայ եկեղեցին եւ ինչ է անցեալը Ռումանիոյ հայ թեմին: Յետոյ զանազան գլուխներու նիւթ պիտի դառնան հայ մշակութային ձեռնարկները, հայ կրթարանները, հայ մամուլը, հայ բարբառը, առեւտուրը եւ արհեստը հին ռումանահայոց մէջ, եղբայրութիւնները որ գոյութիւն ունեցեր են դարերով, հետքերը որ կը հասնին մեզի դարերուն մէջէն՝ եկեղեցի, ձեռագիր կամ արուեստի նմուշ, հայութեան բարքն ու կենցաղը, երգերն ու սովորութիւնները: Ու կարելոք գլուխի մը կը մնան դէմքերը, զորս հայ տարրը հայթայթեց այս երկրին ու անոնց կատարած գործը ռումէն կեանքի մէջ:

ԳԼՈՒԽ Բ.

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Ռումանահայ դադութի պատմութեան յետագայ փուլերը շատ աւելի լուսարանուած պիտի գտնենք՝ երբ նախ լաւ մը ճանչնանք, թէ հայերը ինչպէս ասպնջականութիւն գտան այս երկրին մէջ, ինչ իրաւունքներ վայելեցին պահ մը ու յետոյ ինչ հալածանքներ տեսան, ինչ բնական իրաւունքներ ատեն մը կորցուցան իրենցմէ ու ինչ պայքարներ մղեցին վերստանալու համար զանոնք:

Այդ բոլորը իմանալ՝ դիւրութիւն կուտայ ըմբռնելու այս դադութին պատմութեան միւս երեսները, — կրօնական հալածանքները, որոնց ենթարկուեցան հայերը, հայ թեմի մը խնդիրը՝ որ հազար փուլերէ անցաւ, հայոց առեւտրական դերը, եւ նաեւ այն տխուր էջը՝ ուր պիտի պատմուի թէ ինչպէս հատաւ ռումանահայը:

ԱՍՊԵՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պէտք է ըսել որ հայերը առաջին օրէն ասպնջականութիւն վայելած են ռումէն հողին

վրայ, ուր ոտք կոխեր էին ԺԱ. դարէն սկսեալ:

Հատակոտոր են ԺԱ.-ԺԳ. դարերու մասին մեր ունեցած տեղեկութիւնները:

Բայց դիտենք որ բաղմամբիւ հայեր կային Մոլտավիոյ մէջ՝ Մոլտավ իշխանութեան հիմնադիր Տրակօշ Վոտայի (1352-1353) օրով իսկ եւ լաւ քաղաքացիներ դարձած էին պահելով հանդերձ իրենց կրօնն ու լեզուն, ինչպէս կ'ըսէ Հաշտու ռումէն պատմագիրը "Istoria Tolerantei Religioase", 1868, էջ 62-64:

Հայերը կուգային Մոլտավիա հաստատուել ոչ միայն անոր համար որ խիստ աժան էին հոն հողերը, եւ երկիրը ամէն հնարաւորութիւն ունէր միջազգային առեւտուրի համար, այլ նաեւ որովհետեւ լաւ հիւրընկալութիւն կը գտնէին Մոլտավիոյ իշխաններուն կողմէ: Այնպէս որ Տրակօշ Վոտայի օրով այնքան աճած էր հայերուն թիւը, որ անոնք արդէն իրենց եկեղեցիները ունէին Եաչի, Պոթօշանի եւ Սուչովայի մէջ, թէ եւ դեռ փայտաչէն:

Ալէքսանդր-չէլ-Պան Վոյվօտը (1400-1432) եղաւ որ ամենէն աւելի դիւրացուց հայ վաճառականութեան գործունէութիւնը իր երկրին սահմաններուն մէջ: Այս Վոյվօտը իր երկիրը հրաւիրեց հայ եւ գերման վաճառականներ եւ 1407 Հոկտեմբեր 8 թուակիր հրովարտելով մը անոնց տուաւ կարգ մը արտօնութիւններ, մասնաւորաբար զերծ կացուցանելով զանոնք անարդար մաքսերէ: Իր օրով արդէն 3000 տունի չափ հայեր հաստատուած էին Մոլտավիոյ եօթը դիւխաւոր քաղաքներուն մէջ, — Սուչովա, Չէթաթէ Ալպա, Կալաց, Վասլիու, Պոթօշան, Տօրօհօյ եւ Հօթին: Այս քաղաքներուն մէջ Սուչովան էր սակայն առեւտրական մեծագոյն կեդրոնը, ուր սկսան համախմբուել հայերը, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Շթէֆան-չէլ-Մարէ (1457-1504) իշխանը եւս արտօնութիւններ տուաւ ինչպէս գերման, նոյնպէս հայ առեւտրականներու, որպէսզի անոնք զան Մոլտավիա հաստատուին: Արդարեւ անոր օրով աւելի եւս շատցաւ հայ գաղթականութեան թիւը Մոլտավիայի սահմաններուն մէջ:

Յետագայ իշխաններու ատեն ալ հայերը